

ԱԳՈՒԼԻՍԻ ԲԱՐԲԱՌԻ ԾԱԾԿԱԼԵԶՈՒՆ

Ինչպես հայտնի է, **ծածկալեզուն** (միջազգային եզրույթով՝ **արգո** (**argot**) սոցիալական, մասնագիտական կամ այլ կապերով միավորված մարդկանց խմբի լեզվի մի շերտն է, որը ձևավորվում է տվյալ հանրության լեզվի հիմքի վրա¹: Այստեղ բառերը և կայուն բառակապակցությունները գործածվում են այլ նշանակությամբ՝ միտքը տվյալ խմբից դուրս գտնվող մարդկանց համար անհասկանալի դարձնելու նպատակով:

Ծածկալեզու են ունեցել հայ վաճառականները, գզրարները, թափառաշրջիկ արհեստավորները և այլք: Ծածկալեզվի մի տեսակ են ունեցել նաև ուշ միջնադարի հայ աշուղները, որոնք որոշ ստեղծագործություններում բառերը կամ վանկերը շրջել են, երբեմն էլ դրանցում որոշակի հնչյուններ ավելացրել («թարս լեզու»)²:

Հայաստանի տարբեր շրջաններում հայտնի է նաև ծածկալեզվի մի շատ հայտնի տեսակ («ծտի լեզու»), որտեղ բաղաձայն հնչյուններ են հավելվում (**գ, գ, լ** և այլն) բառերի յորաքանյուր վանկի ձայնավորից առաջ, իսկ ձայնավորով սկսվող վանկից առաջ՝ նաև **ը** հնչյունն ավելացրել:

Հայերենի որոշ բարբառների բառապաշարներում առավել կամ նվազ չափով առկա են առանձին բառեր և բառակապակցություններ, որոնք արտահայտում են որոշակի թաքնված իմաստ և հասկանալի են միայն բարբառը կրողների որոշակի շերտերի: Օրինակ, Վանի բարբառում **տեղին** բառն ուներ նաև «ոսկի» թաքնված իմաստը («Տեղին քանի՞ ի» նախադասությունը վանեցին կհասկանար՝ «Որքա՞ն է ոսկու փոխարժեքը»), Բայազետի բարբառում **հառու թըռնել** բառակապակցությունն ունի նաև «անբարոյականություն անել» թաքուն իմաստը («Էն կընիկը շատ հառու ա թըռե» նախադասությունը գավառցին հասկանում է «Այն կինը շատ անբարոյական է եղել»), իսկ Ճահուկ-Վայքի միջբարբառում **խօղ ուղացնիլ** բառակապակցությունը ունի նաև «խաբել, մոլորեցնել» իմաստը («Հըրեվանիս

¹ **М. Приемышева**, *Тайные и условные языки в России XIX в.*, ч. 1, СПб., 2009, с. 10-22.

² **Մ. Աղայան**, *Հայ գուսանները և գուսանաաշուղական արվեստը*, Ե., 1959, էջ 39:

հառ՝սը ըսկէսօրը խօդ ա ուղացնըմ» նախադասությունը վայոցձորցին կհասկանա՝ «Հարևանիս հարսը սկեսուրին խաբում-մոլորեցնում է»):

Անհրաժեշտ է նշել, որ երբեմն հնարավոր չէ հստակ սահմանագատել ծածկալեզվի և սովորական կայուն բառակապակցության դրսևորումները, քանի որ կայուն բառակապակցությունը նոր բարբառային միջավայրում կարող է արտահայտել շատերին անհասկանալի՝ ծածուկ իմաստ, իսկ ծածկալեզվի բառը կամ բառակապակցությունը ժամանակի ընթացքում կարող է հասկանալի դառնալ տվյալ միջավայրի բոլոր շերտերի համար:

Ծածկալեզվի հարուստ և յուրօրինակ դրսևորումներ ունի հայերենի ամենաառանձնահատուկ բարբառներից մեկը՝ Ագուլիսի բարբառը: Հայոց պատմական Գողթն գավառի այս հինավուրց բարբառի վերաբերյալ իր հայտնի աշխատանքում³ **պայմանավոր լեզու** կամ **պայմանավոր խոսքեր** եզրույթով է ծածկալեզուն բնորոշել Սարգիս Սարգսյանցը: Գրքի երկրորդ մասում ներկայացնելով Ագուլիսի ծածկալեզվի մի ամբողջ ցանկ պայմանական բառեր՝ հեղինակը նշում է, որ դրանք գործածվում են հատկապես Զաքարյալայի և Նուխիի վաճառական գոկերը՝ իրենց խոսքը շրջապատի համար անհասկանալի դարձնելու համար⁴: Այդուհանդերձ, Վերին և Ներքին Ագուլիսների և շրջակա գյուղերի (Տանակերտ, Յղնա, Քաղաքիկ, Հանդամեջ, Դիսար, Ռամիս, Փառակա և այլն) բնակիչները ծածկալեզուն կիրառել են նաև առօրյա կյանքում՝ միմյանց հետ երեխաներից, հյուրերից, օտարներից գաղտնի շփվելիս:

Ագուլիսի ծածկալեզվի առանձին բառեր և բառակապակցություններ անուղղակիորեն ներկայացնում է Մարի Զաքարյանը՝ իր «Ագուլիսի բարբառը» մենագրություն-բառարանում⁵: Մի սովոր բառացանկ է ներկայացնում նաև պատմաբան Արգամ Այվազյանը՝ իր աշխատասիրած «Ագուլիսի բարբառի մասունքներ» ժողովածուում⁶:

Բացի հիշյալ աշխատանքներում ամփոփված նյութից, ծածկալեզվի վերաբերյալ տարիներ առաջ նյութեր ենք գրանցել նաև ծնունդով գողթնցիներ Նազիկ Ավագյանից (ծնվ. 1924թ., Յղնա), Ռոստոմ Շիկանյանից (ծնվ. 1922թ.,

³ Մ. Սարգսեանց, *Ագուլեցոց բարբառը (գոկերի լեզուն)*, Մ., 1883, 1-ին մաս, էջ 19-20:

⁴ Մ. Սարգսեանց, նշված աշխատանքը, 2-րդ մաս, էջ 11-12:

⁵ Մ. Զաքարյան, *Ագուլիսի բարբառը*, Ե., 2008:

⁶ *Ագուլիսի բարբառի մասունքներ* (աշխատասիրությամբ Ա. Այվազյանի), Ե., 2011, էջ 107-110:

Յղնա), Սարգիս Հայրապետյանից (ծնվ. 1945թ., Տանակերտ), Բորիս Միքայելյանից (ծնվ. 1943թ., Ռամիս):

Ագուլիսի ծածկալեզվում մեծ թիվ են կազմում առանձին ծածկաբառերը, որոնք, կիրառվելով այլ բառերի և բառակապակցությունների հետ, արդեն իսկ արտահայտում են թաքնված իմաստ.

Ծածկաբառ	Բառացի իմաստ	Թաքնված իմաստ
Բըրսըվեր Գըլիըվեր	Երեսնիվայր Գլխիվայր	Ապառիկ
Մըկնըկայոխք	Մկան ատամ	Բրինձ
Կուկ	Կուկ («հարթ, ողորկ»)	Լավ
Պլագ	Պլիկ («մետաղադրամ»)	Փող
Նօլնը	Պայտ	Ռուբլի
Գոննդ	Գունդ	Թուման (10 ռուբլի)
Կօտիկ	Կոտիկ («զլխանոց»)	Աբասի (20 կոպեկ)
Ծայտ	Ծիտ	Շահի (5 կոպեկ)
Տըրըխկուն	Թրխկան	Հրացան
Փըտաջոնր Քըրաջոնր	Փայտաջուր Քարաջուր	Գինի
Քըրոսոնք	Քրտինք	Օղի
Պանշ	Բանշ	Ձի
Ծեղ	Ծեղ	Հաց
Քեստ	Քեստ («ջուլիակի սանր»)	Գարի
Թօ	Թա(նկ)	Թանկ
Հալելուկ	Հալելիք	Յուղ
Մըրքավոր	Մորքավոր	Հոգևորական
Մըկըձեք	Մկան ձեռք	Շատ փոքր
Այբ, Բեն, Գիմ...	Այբ, Բեն, Գիմ...	Մեկ, երկու, երեք...

Ագուլիսի ծածկալեզվում մեծ թիվ են կազմում նաև ծածուկ իմաստ արտահայտող կայուն բառակապակցությունները.

Բառակապակցություն	Բառացի իմաստ	Թաքնված իմաստ
-------------------	--------------	---------------

Ագու տախտեղ	Ագայի պղպեղ	Շատ վատ մարդ
Առու թըռօղ	Առու թռչող	Թեթևաբարո կին
Շամբալութի յեղ	Շագանակի յուղ	Շատ ժլատ մարդ
Ուսպատ ծահիլ	Իրեն ցուցադրել	Բարեմասնություն-ները դրսևորել
Վառ չափիլ	Հետույք չափել	Իրավիճակը պարզել
Ագին կըշկըռիլ	Պոչը կշկռել	Կարճ կապել
Բմբակ մանիլ	Բարակ մանել	Հիվանդանալ
Դաբանին թըքիլ	Կրնկին թքել	Փախչել
Աղվիսի խօրագ՝	Աղվեսի ուտելիք	Պանիր
Խընձո՞ր նօտիլ	Խնձոր ուտել	Խոսք հավաքել
Տըրէխ հաքցընիլ	Տրէխ հագցնել	Խաբել
Դուրք թակուղ	Դուռ թակող	Գզիր
Դեղին շօն	Դեղին շուն	Ինքնաեռ
Ծերտ ուհման	Ծերտ մարդ	Ժլատ մարդ
Ծեղ կըրիլ	Ծեղ կրել	Հաց ուտել

Ծածկալեզվի բաղադրիչներից են նաև ամբողջական կայուն նախադասությունները, որոնք կրկին խիստ որոշակի թաքնված իմաստ ունեն բարբառում:

Նախադասություն	Բառացի իմաստ	Թաքնված իմաստ
Տիրիվ ա կըտրում: Տիրիվ ա քաղում:	Տերև է կտրում: Տերև և քաղում:	Հասկանում է:
Ուրմանը ծօկ ա: Կըտօրը ծօկ ա:	Պատը ծակ է: Կտուրը ծակ է:	Լսող մարդ կա:
Պըտօրհանըտ բօց պա- հա:	Պտրհանդ («պատի մեջ փորված պահարան») բաց պահիր:	Աչքդ բաց պահիր, ուշադիր եղիր:
Քըչամանը մօտիկ ա:	Քարաճիկը մոտիկ է:	Խոսք պահող չէ:

Դեղին շունը հըջըցո՞ւր:	Դեղին շանը հաչացրու:	Ինքնաեռը գցիր:
Աղինջով վառ չի սըրբե՞ծ:	Եղինջով հետույք չի սրբել:	Դժվար կյանք չի տեսել:
Դո՞ւզլաղումը աղ կօ:	Աղահանքում աղ կա:	Խելացի է:
Դըրմընանո՞ցը դա՞ր-տանկ ա:	Հարդանոցը դատարկ է:	Անխելք է:
Տընձակութ ա կըտրե՞ծ:	Տանձի պոչ է դարձել:	Խիստ նիհարել է:
Բա՞րանկ ա մանում:	Բարակ է մանում:	Հիվանդ է:
Նօ, մույն վառ չափա, իկ:	Գնա, մի հետույք չափիր, արի:	Գնա, իրավիճակը պարզիր, արի:
Կըրճըվանուց ուման ա ակած:	Կարճանից մարդ է եկել:	Խոսքդ կարճ կապիր:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում շրջակա ժողովուրդներին ագուլիսցիների տված ծածկանունները՝ **ծանի** («թուրք»), **յօջը արկան** («պարսիկ»), **սուհ** («ռուս»), **դըղնըանգուճ** («հրեա») և այլն: Առաջինը հավանաբար աղերս ունի հայերեն **ծանակ** («խայտառակություն, ծաղր») բառի, թերևս նաև հունարեն **σάσσα** («զիծ»), լատիներեն **sannio** («ծաղրածու») բառերի հետ⁷, երկրորդը՝ «աջը երկար» բառակապակցունն է, երրորդը՝ բարբառի **սուհ** («սոխ») բառն է՝ ո > ու և իս > հ հնչյունափոխություններով, չորրորդը՝ հայերեն **դեղնականջ** բառն է, ամենայն հավանականությամբ «ոսկեականջ» («ոսկեսեր») իմաստով:

Ագուլիսի բարբառի ծածկալեզվի դրսևորումները վկայում են բարբառի բառապաշարի և պատկերավոր արտահայտությունների հարստությունը: Վերոհիշյալ ցանկերը թեև ամբողջովին և սպառիչ չեն ներկայացնում բարբառի բառապաշարի այս հետաքրքիր շերտը, այնուամենայնիվ հնարավորություն են տալիս ըստ ծագման դրանք բաժանելու հետևյալ հիմնական խմբերի՝ ա) առարկայի կամ երևույթի արտաքին հատկանիշից բխող բառեր և բառակապակցություններ (**մըկնըկայոիք**⁷, **քէստ**, **դեղին շօն**, **ծայտ**, **նօլնը**,

⁷ Զ. Աճառյան, նշված աշխատանքը, հ.2, Ե., 1973, 444 էջ:

տրրըխկուն, հալելուկ, մըրքավուր), բ) առարկայի կամ երևույթի ներքին հատկանիշից բխող բառեր և բառակապակցություններ (Ազու տախտեղ, շամբալուրի յեղ, դըղնըանգուճ), գ) փոխաբերական իմաստ արտահայտող բառեր և բառակապակցություններ (ազին կըշկըռիլ, բըրանկ մանիլ, վառ չափիլ, տընձակուր կըտրիլ), դ) այլ լեզուներից թարգմանաբար փոխառված բառեր և բառակապակցություններ (քրտոնք՝ պարսկերեն *araq* (1. «քրտինք», 2. «ողի») բառից, պլազ՝ պարսկերեն *pul* («փող») բառի նվազական փուլիկ կամ վերջինից ածանցյալ պլիկ ձևից⁸) և այլն:

Vardanyan Artak – The Secret Language of the Agulis Dialect.— One of the most unique dialects of the Armenian language – the Agulis dialect, has rich and peculiar manifestations of the secret language (argot). By origin, the vocabulary of the Agulis dialect can be divided into groups: a) words and phrases derived from the external sign of an object or phenomenon (*մըկնըկայռիք՝ a mouse tooth* (“rice”), *դէղին շուն yellow dog* (“samovar”), *մըրքավուր bearded man* (“priest”); b) words and phrases derived from the internal attribute of an object or phenomenon (*Ազու տախտեղ Aza pepper* (“a very bad person”), *շամբալուրի յեղ chestnut oil* (“meanie”), *դըղնըանգուճ yellow-eared* (“Jew”); c) words and phrases expressing figurative meaning (*ազին կըշկըռիլ spin the tail* (“curl”), *բըրանկ մանիլ thinly spin* (“get sick”), *տընձակուր կըտրիլ become the tail of a pear* (“lose weight”), etc.

Варданыан Артак – Тайный язык агулисского диалекта.— Один из самых уникальных диалектов армянского языка – агулисский, обладает богатыми и своеобразными проявлениями тайного языка (арго). По происхождению словарный состав агулисского диалекта можно разделить на группы: а) слова и словосочетания, исходящие из внешнего признака предмета или явления (*մըկնըկայռիք՝ мышинный зуб* (“рис”), *դէղին շուն желтая собака* (“самовар”), *մըրքավուր бородач* (“священник”); б) слова и словосочетания, исходящие из внутреннего признака предмета или явления (*Ազու տախտեղ азанский перец* (“очень плохой человек”), *շամբալուրի յեղ масло каштана* (“скупердяй”), *դըղնըանգուճ желтоухий* (“еврей”); в) слова и словосочетания, выражающие переносный смысл (*ազին կըշկըռիլ закрутить хвост* (“закругляться”), *բըրանկ*

⁸ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.4, Ե., 1979, էջ 87:

մանիլ тонко прясть (“болеть”), **տընձալուր** կըտրիլ стать хвостиком груши (“сильно похудеть”) и др.